ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Ա. ՎԱՆ

Հասնելով Վան, մենք իջեւանեցինք Այգեստան կոչոած արուարձանում, որ կից է այդ քաղաքին: Մեզ ընդունեց իր տանը թաղի նշանաւոր անձիքներից մէկը, որ կոչւում էր վարպետ Փանօս: Այդ պարոնը արհեստով ներկարար էր:

Տան տէրը առաջին անգամից երեւաց ինձ բարի եւ ազնիւ մարդ, բաւական վայելչակազմ մարմնով եւ պայծառ դէմքով: Արեւելքում մարմնի բարեձեւութիւնը շատ անգամ մարդու յառաջադիմութեան պատճառ է դառնում: Բայց վարպետ Փանոսը, բացի դրանից, ունէր եւ ճարտար լեզու եւ, որպէս երեւում էր, բաւական փորձոած ու խելացի մէկն էր: Երեւի այդ էր պատճառը, որ չնայելով նրա երիտասարդութեանը, նա ընտրոած էր թաղական խորհրդի անդամ, ուր ծերութիւնը եւ սպիտակ մօրուքը աւելի մեծ նշանակութիւն ունէին, քան խելքը:

Բոլորովին մութն էր, երբ հասանք Այգեստան:

Ասլանը սկսել էր այժմ, որպէս ասում են, ինձ փոքր ի շատէ մարդու տեղ դնել: Երբ մտանք վարպետ Փանոսի հիւրանոցը, նա իսկոյն ինձ ծանօթացրեց տան տիրոջ հետ, աւելացնելով, թէ իր մանկութեան ընկերներից մէկն եմ եղել եւ այժմ նրա լաւ բարեկամն եմ: Վարպետը իր սուր եւ թափանցող աչքերով ոտքից ցգլուխ չափեց ինձ, յետոյ խիստ մտերմաբար յայտնեց իր ուրախութիւնը ինձ տեսնելու համար:

Որպէս երեւում էր, վարպետը նախաճաշ էր Ասլանի հետ եւ իր տան մէջ հէնց այն գիշեր սպասում էր նրան: Նա գիտէր եւ այն, թէ որտեղից էր գալիս Ասլանը, այդ պատճառով, երբ նստեցինք, նա մի առանձին խորհրդաւոր եղանակով հարցրեց.

— Ինչո՞ւ այդքան երկար տեւեց քո ուխտագնացութիւնը...

— Այդպէս պատահեց... — պատասխանեց Ասլանը նոյն եղանակով:

— Յուսով եմ, որ սուրբ աստուածամայրը կատարած պէտք է լինի քո ցանկութիւնը...

— Նա իր ուխտաւորներին անմասն չէ թողնում իր շնորհներից...